ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

Տեղի ունեցավ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստ: Քննության առնվեց ազգամիջյան հարցերի լուծման գործում որոշ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների մասին հարցը:

Նշվեց, որ իրադրության ապակայունացման, ազգամիջյան երկպառակության բորբոքումը չկանխելու, հակաօրինական գործողությունների, անգործունության դրսևորման և մի շարք ուրիշ խախտումների համար միայն 1988 թվականի դեկտեմբերին ՍՄԿԿ շարքերից հեռացվել է 13 ղեկավար, զբաղեցրած պաշտոններից հանվել են կուսակցական, սովետական, տնտեսական մարմինների 24 ղեկավար աշխատողներ, տրվել է 68 կուսակցական տույժ: Պաշտոններից ազատվել, կուսակցական կարգով պատժվել են քաղաքային և շրջանային օղակի իրավապահ մարմինների 12 ղեկավարներ:

Սակայն հանրապետության իրավիճակը շարունակում է բարդ մնալ այն բանի հետևանքով, որ կուսակցական, սովետական, տնտեսական և իրավապահ մարմինների դեռևս ոչ բոլոր ղեկավարներն են սկզբունքային հետևություններ արել ազգամիջյան հարաբերությունների ասպարեզում թույլ տրված լուրջ վրիպումներից: Հարկ եղած ձևով անզիջում հարձակողական պայքար չի մղվում ազգայնամոլ տրամադրություններ կրողների դեմ: Տակավին այդ աշխատանքին անմասն են մնում սկզբնական կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և ուրիշ շատ հասարակական կազմակերպություններ:

Քաղաքացիների սահմանադրական իրավունքների կոպիտ խախտումներ, աճաբեկմամբ, սպառնալիքներով ուղեկցվող անկարգություններ են տեղի ունեցել Ստեփանավանի, Իջևանի, Գուգարքի, Եղեգնաձորի, Կրասնոսելսկի, Արարատի, Մասիսի, Վարդենիսի, Ամասիայի, Նոյեմբերյանի շրջաններում և որոշ այլ վայրերում:

Այս պայմաններում մի շարք ղեկավար կոմունիստներ անսկզբունքայնություն են թույլ տվել հանրապետությունում տեղի ունեցող դեպքերի, իրենց գլխավորած կոլեկտիվների և ենթակա կազմակերպությունների իրավիճակի գնահատման հարցում:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն նշեց կուսակցության մի շարք շրջկոմների, քաղկոմների, ժողովրդական դեպուտատների սովետների գործկոմների, մինիստրությունների ու գերատեսչությունների, իրավապահ մարմինների ղեկավարների անբավարար աշխատանքը իրավակարգի և օրինականության ամրապնդման, քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու պարտականությունների խստիվ կիրառման ասպարեզում:

Շրջանում իրադրության կարգավորման, ազգամիջյան ընդհարումների կանխման նպատակով վճռական միջոցներ չձեռնարկելու համար, որը հանգեցրել է մարդկային զոհերի և ադրբեջանական բնակչության զանգվածային արտահոսքի, ՀԿԿ Ստեփանավանի շրջկոմի առաջին քարտուղար Ցու. Հ. Ճշմարիտյանին հայտարարվել է խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում: Ժողովրդական դեպուտատների Ստեփանավանի շրջանային սովետի գործկոմի նախագահ, ՍՄԿԿ անդամ Ռ. Ա. Միրզոյանին հայտարարվել է խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում:

Աննպատակահարմար է համարվել զբաղեցրած պաշտոնում նրա հետագա մնալը:

Շրջանում ազգամիջյան հարաբերությունների քաղաքական ղեկավարումը չապահովելու համար, որը հանգեցրել է դրանց ձևախեղման և ադրբեջանական ազգության անձանց ինտենսիվ տեղափոխության, կուսակցության Իջևանի շրջկոմի առաջին քարտուղար Ջ. Գ. Անանյանին հայտարարվել է նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում: Ժողովրդական դեպուտատների Իջևանի շրջանային սովետի գործկոմի նախագահ, ՍՄԿԿ անդամ Լ. Ե. Օրդինյանին հայտարարվել է խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում:

Հանդես բերած անսկզբունքայնության համար, որը արտահայտվել է ուսումնական հաստատություններում պարապմունքների ընդհատումը չկանխելու մեջ, ինչպես նաև քաղաքականապես վնասակար ազդեցությունից սովորողներին և ուսանող երիտասարդությանը պատնեշելու միջոցներ չձեռնարկելու և այդ գործում դասախոսների և ուսուցիչների մի մասի բացասական դերի համար Հայկական ՍՍՀ ժողովրդական կրթության մինիստր, ՍՄԿԿ անդամ Ս. Տ. Հախումյանին հայտարարվել է խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում:

Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստր Հ. Ս. Հարությունյանի ուշադրությունը խլուտիվ հրավիրված է այն բանի վրա, որ ժամանակին ներգործում միջոցներ չեն ձեռնարկվել հասարակական կարգուկանոնի պահպանությունն ուժեղացնելու նպատակով և անբավարար պահանջկոտություն է դրսևորվել անձնակազմի նկատմամբ: Ստորադաս մարմինների ղեկավարների նկատմամբ դրսևորած ցածր պահանջկոտության, զանգվածային անկարգությունները և ազգամիջյան հողի վրա հանցագործությունները կանխելու հարցում նրանց պասիվ դիրքորոշման նկատմամբ հաշտվողական վերաբերմունքի համար Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրի տեղակալ, ՍՄԿԿ անդամ Գ. Գ. Գրիգորյանին հայտարարվել է խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում:

Կադրերի ընտրության և տեղաբաշխման գործում թույլ տված լուրջ վրիպումների, նրանց նկատմամբ պահանջկոտության նվազման համար, որի հետևանքով տեղի են ունեցել օրինականության զանգվածային կոպիտ խախտումների փաստեր և ծանր հանցագործություններ, Հայկական ՍՍՀ դատախազի տեղակալ, ՍՄԿԿ անդամ Գ. Ա. Ղուկասյանին հայտարարվել է խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում:

Հանրապետության դատախազության և Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրության կոլեգիաներին հանձնարարված է ուժեղացնել իրենց գործողությունների և ենթակա մարմինների կոորդինացումը, ներգործում միջոցառումներ իրականացնել հանրապետությունում սոցիալիստական օրինականությունը, իրավակարգը ամրապնդելու, քաղաքացիների սահմանադրական իրավունքների և պարտականությունների հուսալի պաշտպանությունն ապահովելու նպատակով, խիստ հաշիվ պահանջել այն ղեկավարներից, մյուս պաշտոնատար անձանցից, որոնք անհապաղ միջոցներ չեն ձեռ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ձարկում իրավախախտումները կասեցնելու համար։ Առանձնակի ուշադրություն դարձնել կադրերի հետ տարվող աշխատանքի արմատական բարելավմանը, այդ մարմինները քաղաքականապես հասուն, ընկերքզբունքային, բանիմաց մարդկանցով համալրելուն։ Հասնել աշխատավորական կոլեկտիվների և բնակչության հետ ներքին գործերի մարմինների, դատախազության ավելի սերտ կապերի, կուսակցական կոմիտեներին, սովետական մարմիններին սիստեմատիկաբար իրազեկ պահել օրինականության վիճակի և դրա ամրապնդման նպատակով ձեռնարկվող միջոցների մասին։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն Հայաստանի կոմկուսի քաղկոմներին, շրջկոմներին, սովետական, տնտեսական մարմիններին, միանիստրություններին և գերատեսչություններին պարտավորեցրեց խորապես վերլուծել քաղաքական իրադրությունը քաղաքներում, շրջաններում, ճյուղերում, ձեռնարկություններում, կազմակերպություններում ազգամիջյան հարաբերությունների վիճակը և իրադրության հետագա կարգավորման անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած որոշումների պահանջներին համապատասխան։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն կուսակցական կոմիտեներին հանձնարարեց խիստ պատասխանատվության ենթարկել այն կոմունիստներին, որոնք աջակցում են ըստ ազգային պատկանելության մարդկանց տարանջատմանը, թույլ են տալիս ծայրահեղական ելույթներ, բորբոքում ազգամիջյան թշնամանք։